*740. ԽԱՉՔԱՐ*. մարմարից

Մախտեսի Սարգիս Գանձակեցի

Կազմեցի զայս խաչս:

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 104, «Ազգ. հանդ.», VII-VIII, 374, Բարխուդարյան, ՄԲԿ, 182, Ոսկյան, Գվ, 56:

*Ծանոթ*. Ջալալյանցի հաղորդմամբ, խաչքարը գտնվել է Արդվիից ոչ հեռու, Սրբանեսի վանքի մատուռի ներսի դամբարանից, որն ավանդաբար վերագրվում է Յովհան Օձնեցուն: Ս. Բարխուդարյանը խաչքարը համարում է ԺԶ-ԺԷ դարերի գործ: Տեղն այժմ հայտնի չէ:

Ջալալյանցը կարդացել է անձամբ, իսկ Լալայանը՝ ըստ լսածի. ***Ի յիշատակ Գեննեցի Մըհի Սարգսին սբ. խաչս շինուեցաւ,*** որը բոլորովին տարբեր իմաստ է արտահայտում:

## ՄՂԱՐԹ

Օձունից ոչ հեռու այս գյուղի մեջ ու շրջակայքում կան մի քանի խաչքարեր և Ս. Հակոբ (կամ՝ Ծըղկավանք) անունը կրող փոքրիկ մատուռ: Արձանագրությունները փորագրված են խաչքարերի և պատվանդանների վրա: Հնագույնը թվագրված է 1183 թ., իսկ վերջինը՝ 1303 թ.: Հյուսիսակողմում պահպանվում են հին բնակավայրի (Հողոցիմ) բավականին ընդարձակ տարածության վրա սփռված մնացորդները՝ գերեզմանոցով, ուր մի քանի խաչքարի արձանագրություններ հողմահարված են և դժվարընթեռնելի: Գյուղամիջյան եկեղեցին, զանգակատունը և շրջապատի գերեզմանոցը ունեն XIX դ. արձանագրություններ, անկարևոր՝ պատմական առումով:

Գյուղացիների կողմից կիսավեր եկեղեցին վերանորոգվել է վերջին տարիներին:

*741. ԽԱՉՔԱՐ*. կանգնած է ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա, գյուղի հյուսիսային եզրին, բլրի ստորոտում, աղբյուրի մոտ. տապալված խաչքարն այժմ վերականգնված է, պատվանդանին, 8 տող.



Ի ԹՎԻՍ :ՉԾԲ: (1303)

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ԲՈՒԲԱՔՍ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ-

Ն ԻՄ ՄԱՆԴՐՈՒՏ, ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹ[Ե]ԵԱՄ [Բ]

ԲԵՐԱՔ ՁՁՈՒՐՍ ԵՒ ԿԱՆԿՆԵՑԱՔ ՁԽ-

ԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔՍ՝ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵ-

[Ա]ՆՑՍ: ՈՐՔ ԱՐԲԵՔ Ի ՍՄԱՆԷ ԵՒ ԵՐԿԻՐԴ-

ԱԳԷՔ ԽԱՉԻՍ ՔԻ՝ ՅԻՇԵ-
ՑԷՔ ԶԻՍ ԵՒ ԶԾՆՈՂՔՆ ԻՄ:

*Հրատ.* Շահինյան, ՀԱԿՀ, 54, Ավագյան, ՎԱԲ, 52:

***Ծանոթ.*** Վերջին երկու տողերի բաց տեղերում քարը վնասված է եղել գրելու ժամանակ, և գրիչը անցել է դրանց վրայով:

***Բազում աշխատութեամբ*** բերված ջրի վրա այժմ ծորակ է շինված, որից օգտվում են գյուղացիները:

6-րդ տողի ***որք արբեք ի սմանէ*** կապակցությունը ակնարկ է՝ ովքեր ջրից հագենան, լիանան (= արբէք) հորդորի:

Ի դեպ, հիշատակված Բուբաքը, Պ. Մուրադյանի կռահմամբ, հավանաբար մեծ իշխան, սպարապետ, Տփխիսի քաղաքագլուխ (ամիրայից ամիրա), Իվանէ Զաքարյանի տիրույթների կառավարիչ, Լիպարիտ Օրբելյանի կնոջ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի տատի՝ Ասփայի հայր Բուբայի ժառանգորդն է, ծոռը (ՀՎԱ, էջ 122-131): Առինջի հարավարևելյան եզրի 1679 թ. երկրաշարժից ավերակված մատուռի մի արձանագրության չամբողջացող տառաշարքի վկայությամբ՝ ԲՈՒՊԱԻՆ ՄԱՒՐՆ կրում է ՆԷՆԷ (գուցե թե՝ Վանենե) անունը, որը հայտնի չէ այլ աղբյուրներից:

Շահինյանը բաց է թողել առաջին տողը: Ավագյանը բերել է առաջին 4 տողերը՝ Բուբաք անվան կապակցությամբ:

***742. ԽԱՉՔԱՐ Ա. ՍԱՐԳԻՍ.*** ցածրիկ պատվանդանի վրա, գյուղից 1,5 կմ արևելք, ավերակ հին գյուղատեղի գերեզմանատան մեջ, չորս շրջանակներին և ողջ մակերեսին, ոչ խոր գրերով 13 տող.



. . . ԹԷ ԵՒ ՄԵԶ,
ԵՒ ՄԵՐ Ն[Ն]ԶԵՑԵԼ-
ՈՑՆ ՄԵՂԱՑ Թ-
ՈՂՈՒԹԻՒՆ:
ԱՂԱՉԵՄՔ ՅԻՇԵԼ
ԶՄԵԶ ԵՒ ԶՏ-
ՂԱՅՔՍ ՄԵՐ Զ
ԹԻՐՔԻՇՍ ԵՒ ԶԱՃ-
ԻՊՇԷՐՍ՝ ՈՐՔ ԵՐԿ-
ՐՊԱԳԷՔ ՄԲ Ն-
ՇԱՆԻՍ, ՈՐ ԿՈՉԻ
ՄԲ ՍԱՐԳԻՍ:
Ի ԹՈՒԻՍ :ՈՀԴ: (1225):

***Ծանոթ.*** Արձանագրությունն սկսվում է շրջանակի ձախ թևի ստորին եզրից և ավարտվում խաչակոթունի տակ՝ թվականով:

***743. ԽԱՉՔԱՐ.*** պատվանդանից ընկած նախորդի մոտ, ճակտոնաձև քիվին, 3 տող



ԱԾ ՈՂՈՐՄԻ ՈՐՈ ԱՆՈՒՆ . . . ԿԱՄ ՆԿՆ Ի-
ԵՑԱՒ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ
ԽԱՉՍ ԾՆՈՂԱՑ Ի [ՄՈՑ]: Ի ԹՎ[ԻՆ] :ՈԿԶ: (1217):

***Ծանոթ.*** Տառերը երեսանց են և դժվար են կարդացվում:

*Գրչագիրը կիսատ է արված (խմբ.):*

*744. ԽԱՉԱՐՁԱՆ (բեկոր).* գյուղամիջում, Մոսինյան Ավետիքի բակում, պատվանդանին, 4 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՄ՝ ՆԿԵՐ-
ՈՒՏՍ, ԿԱՆԿՆԵՑԻ ԱՍՏՈՒԱԾ-
ԱՅԾԻՆՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ՄԻՐ ՈՒԹ-
ՆԷ: ԹԻՒՆ ՅԱՅՈՑ :ՈԼԲ (1183):

*Ծանոթ.* երկմտելի են մնում անձնանունները, բան այդպիսիք կան:

*Մենք որոշ տարակարծություններ ունենք առկա վերծանության նկատմամբ. առաջին տողի վերջում՝ Ն տառից հետո, ուրվագծվում է Ե տառը, այնուհետ կոտրված է, երրորդ տողի վերջում ՄԻ տառերից հետո որոշակի գծագրվում է Թ, վերջին տողում՝ ՆԷ-ին հրոք հաջորդում է Թ, այնուհետ ոչ քե Ի, այլ Ի, առկա են նաև ՅԱ տառերը, սակայն վերջում հավաստիորեն կարդացվում է ԹՎ ՉԼԳ (1284) (խմբ.):*

*745. ԽԱՉՔԱՐ.* եռաստիճան պատվանդանի վրա, գյուղամիջում, Մամաջանյան Շալիկի բակում, ճակատին և խաչի վերին թևի շուրջը 3, թիկունքին՝ 15 և հարավային կողին 16 տող.



ԹԻՒՆ : ՈԾ: (1201) ԵՐ:
ՄԲ ՍԱ-
ՐԳԻՍ:
ԵՄ՝ ԱՂՈՒՏՍ, ԴՈՒՍՏ-
Ր ՆԱՁՄԱԴԻՆԻՆ, ԱՄՈՒՍ-
ԻՆ ՍԱՐԳՍԻ ԵՒ ՄԱՅՐ
ՄԱՄՆԱՅԻՆ,
Ի ՆԱՑԱ ՊԱԿԱՍՄԱՆ ԵՏՌ-
ՒԱՔ Ի ՍԱՆԱՀԻՆՆ ՆԱՑ-
Ա ՀՈԳՈՅՆ ՁԱԲԼԱՍԱԴ-
ԱՆՅ ԱՄԵՆ ՇԱՀ ՈՒ ՁԵՆՈՎ,
ԵՒ :ԻԵ: (25) ԱՒՐԱՎԱՐ ՀՈՂ՝ ՀՐԱՄ-
ԱՆԱՒ ՄԵԾԻՆ ՁԱՔԱՐԻԱՅԻ
ԵՒ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՓԵՍԱՅ-
ԻՆ ԻՄ՝ ՄԻՐԻԱՆԱՅ ԵՒ ԿՆՈՋ
ԻՒՐ ԸՌՈՒԶՈՒՔԱՆԱ: ՁԽԱՉՍ
ԿԱՆԳՆԵՑԱՔ, ՆՁՈՎԱՒՔ
ՓԱԿԵՑԱՔ; ՈՐ ՄԱՐԴ Ի ՍԱՑԱ
ԴՈՒՌ-
Ն ՉԳ
ԱՁԱ-
Տ Ի ՍԱՆ-
ԱՀՆԻ
Ն ԾԱՌ
ԱՌՒԹ
ԵՆԷ: ՈՎ
ՁԱՅՍ
ԽԱՓԱ
ՆԷ՝ ՅԱՅ
ԵՒ
ՅԱՍՏՈՒԱԾ-
ԱԾՆԵ-
Ս ՆՁ-
ՈՎԱԾ
Է:

*Հրատ.* Ավագյան. ՎԱԲ. 231-232. 244. Շահինյան. ՀԱԿՀ. 58 (բովանդակության համառոտ շարադրանքը):

*Ծանոթ.* Ուշագրավ այս նվիրագրից կարելի է եզրակացնել, որ Զաքարիա ամիրսպասալարի հրամանով (գիտությամբ, կամակցությամբ), Նաջմադին իշխանի (թաղված Հաղբատի վանքում) դուստր, Սարգիս Մամիկոնյանի կին Աղուտը, ամուսնու և դստեր՝

Մամնայի *պակասման* (= մահվան) կապակցությամբ նրանց հոգու բարեխոսության համար Սանահնի վանքին է տալիս Աբլասաղանց ծուխը ու 25 օրավար հող և արգելում է (= *նզովաւք փակեցաք*) որ որևէ մեկը փորձի նրանց ազատել ճորտական ծառայությունից:

Ավագյանը վիմագիրը քննարկել է 8-րդ տողում *նացա, սացա* դերանունների հնչյունափոխված տարբերակների և չահ ու զենով՝ օգուտով ու վնասով, բարդության բառաքննության կապակցությամբ:

## ԾԱԹԵՐ

Անվան ուղիղ ձևն է Ծադեր՝ առաջացած այստեղ բնակվող «ծագումով, լեզվով և գրով հայ, բայց դավանանքով և կենցաղավարությամբ հույն»[65] հերձվածող-աղանդավորների անվանումից, որին հետևում էին թե հայերը և թե հույները:

Միաբնակությունից խուսափող քաղկեդոնիկ Ծաթերը գյուղի հուշարձանների պատարիկներն ամենևին չեն խոսում դավանական այդ ուղղության օգտին:

Բնակավայրը Դեբեդի ձախ կողմում է, Արևածագ գյուղի հարևանությամբ, որտեղ կարևոր հուշարձաններ չկան: Հարավային եզրում գտնվում է հին գերեզմանատունը, որի մեջ կանգնած են երկու փոքր եկեղեցիներ՝ իրար մոտ: Կոչվում են Ս. Նշան: Առաջինը թաղածածկ է, ունի բազմաթիվ նորոգումների հետքեր, որոնց ընթացքում օգտագործել են ինչպես հին շենքերի քարեր, նույնպես և գերեզմանաքարեր ու խաչքարեր: Երկրորդը՝ հյուսիսայինն կողմինը, ավերակ է: Նրա արևելյան մասը նորոգել, դարձրել են էլեկտրական հոսանքի կարգավորման կայան: Պատերը շարվել են շրջապատից վերցրած տապանաքարերով ու խաչքարերով:

*746.* ***ԵԿԵՂԵՑԻ.*** հյուսիսային պատի մեջ դրված սպիտակավուն քարի վրա, 6 տող



ՏՐ ԱԾ ՍԻԳՆԵ ՊԱՐՈՆ ԳՈՐԳԷ, ՈՐ ԱՌԱՋ-
ՆՈՐԴԵՑ ՁԵԿԵՂԵՑԻՍ ՍԱԼԵՑ :Ճ: (100) ՍՊ⌊ԻՏԱԿ⌋
ՈՒ :Ա: (1) ՉԱՐԵԿԻ ՀՈՂ ԱՁԱՏ՝ ՅԵԿԵՂ⌊ԵՑ⌋ԻՍ ԵՐԵՏ:
ՁԵՏՆԻ ՈՒՄԻԵՆՆ ԺԱՄ ՆՐՁԻՍԻՆ ԱՐՆԵՆ: ՈՐ ԽԱՓԱ⌈ՆԵՆ ՆԶՈՎ⌉-
ԱԾ ԵՆ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ: Ի ԹՎ⌊ԻՆ⌋ ՀԱՅՈՑ
:ՉԽԶ: (1297): ՎԱՐԴԱՆՍ Կ⌊Ա⌋ՁՄԵԼ ԵՏՈՒ:

*Հրատ.* Ավագյան, ՎԱԲ, 271(առաջին երեք տողերը):

---

[65] Հարցի հանգամանալի քննարկումը տե՛ս Հ.Գ. Մանուչարյան, Պողոս Տարոնացի, Եր., 1982, էջ 96-105: